ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N – Ա14

Ք. Վանաձոր

02 Հուլիսի 2020թ.

«ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Անհատ Ձեռնարկատեր ԱՁԸ, ի դեմս տնօրեն՝ Արսեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող մի կողմից, և Լոռու մարզպետարան ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արթուր Մխիթարյանի, այսուհետև՝ Պատվիրատու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պատվիրում է օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրով նախատեսված իրականացնելու Լոռու մարզի Տաշիր համայնք Գետափնյա փողոց թաղ. 6 «Հայավտոկայան» ՓԲԸ-ին հանդիսացող հողամասերի, շենքերի, շինությունների չափագրման (հաշվառման), քարտեզագրության, գեոդեզիայի և հողաշինարարության, Համայնքի վարչական սահմաններում գրանցված վկայականների տեղանքը ցույց տալու աշխատանքներ (այսուհետև Ծառայություն):

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2.Առանց ծառայության դիմաց վճարելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ պահանջելով հատուցել իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի կատարվում պատշաճ ու օրենքի պահանջներին համապատասխան և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3.Ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնելով Կատարողին և հատուցել հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1.Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2.Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում, Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1.Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2.Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին տեղեկացնելով Կատարողին և հատուցել հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1.Օրենքի պահանջներին և ժամկետներին համապատասխան ապահովել Ծառայության մատուցումը:

2.4.2.Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1.Կատարողի կողմից մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հանձնման–ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու պահից:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության գինը կազմում է 50.000 (հիթսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.4 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման–ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1.Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և ժամկետների պահպանման համար:

5.2.Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում գումարի վճարման համար:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

7.2.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.3.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4.Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ Լոռու մարզպետարան Ք. Վանաձոր Հայքի հրապ. 1 ՀՎՀՀ-06930769 h/h- 900231751026 ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	«ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ Ռուդիկի» Անհատ Ձեռնարկատեր ԱՁԸ Ք. Վանաձոր Մխիթար Գոշի 2 հեռ.+374 322 4-25-45 հեռ. 091-10-33-00 ՀՎՀՀ 66970821 h/h 2051432246031001 «ԻՆԵԿՈԲԱՆԿ» Լոռի մ/ճ
Աշխատակազմի ղեկավար_____Ա.Մխիթարյան	Տնօրեն՝_____Ա.Իսահակյան
Կ.Տ	Կ.Տ